# Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի Հայաստանեայց

# ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711


Շիգակօ,Ապրիլ 7,1981

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկ.Մանուկեան

Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի

Նիւ Եորք,Ն.Ե.

Սրբազան Հայր,

Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար 15,1981-ին եւ 102 տրատու անդամներէն 48-ի՝ օրինաւոր անդամներու մասնակցութեամբ կատարուեցաւ ծխական խորհուրդի մասնակի ընտրութիւն, ներկայացնելով նորընտիր անդամներու անունները քուէից առաւելագոյն կարգով, խոնարհաբար կը խնդրենք Ձերդ բարձր վաւերացումն ու օրհնութիւնը, Ձեր Սրբազնութեան անունով հրաւիրելու զիրենք ծխական խորհուրդի անդամակցութեան:

Համեցէք ներփակ ստանալ Առաջնորդարանիդ հարցարանը, ծխական խորհուրդի 1980 տարուան նիւ-բարոյական տեղեկատուութիւնը ինչպէս նաեւ իմ զեկոյցը:

Վստահելով Ձերդ հայրական վաւերացման եւ արդարադատ ներողամտութեան եւ սպասելով Ձերդ օրհնութեան

Մնամ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Խոնարհ որդիդ՝

Հ.Ժիրայր Արղ.Թաշճեան

| | | |
|---|---|---|
| Տիար Վարդան Պարոնեան | 31 | քուէ |
| Օրիորդ Մանուշակ Գորէգեան | 28 | քուէ |
| Բժիշկ Հրաչեայ Խթիկեան | 27 | քուէ |